

մաղթեմ մաղերսիւ զհանդերպողսդ յիշել ի Քրիստոս ըզյիշման արժանին զերջանիկ րաբունին գտէր Սրապիոն վարդապետն... Հաւերն մղտեսի խօծա Դանիէլին, հանդուցելոյն ի Քրիստոս, եւ ծեր պառաւանցեալ մօրն մղտեսի Աթլասին, եւ նախաժաման եղեալ եղբարցն ի Քրիստոս, Խուզավէրտի սարկաւազին, Քասպարին, եւ Պաղտասար սարկաւազին... ամենայն զարմաւք իւրովք ամէն: Այլ եւ ես անարժանս յերես անկեալ աղաւջեմ զձեզ ո՛վ դասք լուսերամից՝ եւ զումարք խաչակրօնից, որք հանդերպիք սմակարգաւով կամ աւերինակելով, աղօթիւք հայցեցէք ի Քրիստոսէ, Թողութիւն բազմամեզ անձինս, եղկելի զճողիս Յովանիսի, եւ իմ ծնաւդացն ի Քրիստոս զնացելոցն, հօրս Ճանիպէկին եւ մօրս Եթարին, եւ բաղմերախոտ եղբարցս իմ Կարապետ եւ Աստուածատուր սարկաւազին, որ նոքօք են զբաղ եմ ի զրչութիւն, զի հոգացող են մարմնաւոր պիտոյիս, որոց բարեաց պարգեւեսցի յառատածիր Տեսունէն...:

(Շարունակելի)

ՊԵՏՐՈՒԹԻՒՆ ՀԱՅ ՄՇԵԿՈՒԹԱՅԻՆ
ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ

(Շարունակութիւն :)

4. ԱՐԱՐԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1879)

Թղթակից մը 1879 Փետրուար 3 թու-
կանով կը գրէ. «Մեզրէ... երկու ընկերու-
թիւններ միանալով՝ նոր Ընկերութիւն մը
կազմեցին Արարատեան անուամբ եւ ամեն
կերպ լրագիրներ բերելու որոշում ըրին»
(Մասիս, 1879 թ. 2263) :

Հիմն ընկերութիւնները անունով չեն
 յիշուիր: Ուրիշ թղթակից մը մասամբ լու-
 տարանելով՝ կ'ըսէ որ «Անձնուէր ընկերու-
 քեան անունը փոխուելով՝ այժմ Արարա-
 տեան անունը կը կրէ» (Մատիս, 1879 թ.,
 2334): Նոյն թղթակիցը - Կերակոս Ս. Ղա-
 զարեան - քիչ ետք կը տեղեկագրէ. «Մեզրէի
 Արարատեան ընկերութիւնը իրիստ լաւ կ'աշ-
 խատի: Տեառներնդառաջի օրը մեծ հանդէ-
 սով մը բացաւ աղջկանց վարժարանը, որ
 այժմ 60էն աւելի աղջիկ կը յաճախեն՝ երկու
 մասնաւոր վարժուհեաց եւ մէկ քահանայի

Հասարակութեամբ...» (Մասիս, 1879 թ. 2283 եւ թ. 2289) :

Արարատեանի Վարդիներն են .
Նշան Յ . Արփիարեան Ատենապետ
Շիրին Մ . Գույումճեան Ատենադպիր
(Մասիս, անդ) :

5. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1884)

Թղթակիցի մը խօսքերէն դատելով՝
Հինուած կ'երեւայ 1884ի Յուլիսէն առաջ
(Արեւելի Կ. Պ. 1885 թ. 430) :

6. ԱԶԳԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ (1884—1885)

Կը յիշուի 1888ի դարնան եւ հաւանական է որ հիմնուած ըլլայ 1884—5ին, զի կը յիշուի «Ուսումնասիրաց»ի հետ, որոնք երկուքն ալ տկարացած են 1888էն առաջ եւ Տ. Ղեւոնդ Սրբ. Շիշմանեան Առաջնորդին ձեռք կը միանան, «ի մի կը ձուլուին»։ Այս միացեալ Ընկերութիւնը — չ'ըսուի թէ ինչ անուն կը կրէ — կը բանայ մանչերու կեդրոնական վարժարանը՝ «Քաջահմուտ եւ բարոյականի տէր դասատուաց խնամոց ներքեւ» (Հայրենիք, 1888, էջ 323։ — Հմմտ. Արաքս, Ս. Պետերբուրգ. 1888, էջ 42)։

7. «ՍԱՆԴԵՏԵԱՆ» ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1885—1886)

Հիմնումի տարին կը համարինք իբր
1885 - 6: 1888ի զարնան կը տեղեկագրուի.
«Մեղրաի հայերը ունին նաեւ իրական սեռէ
բաղկացեալ մի «Սանդիսեան» ընկերութիւն,
որ բացած է աղջկանց համար մի վարժա-
րան, վկայեալ վարժուհեաց խնամոց ներքեւ
եւ ունի 80 աշակերտուհի» (Հայրենիք, 1888
էջ 323):

8. ՇՐՋԱՆԱԻԱՐՏԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1908—1909)

Կաղմուած կ'երեւայ 1908-9: 1909 Հոկտեմբեր 1ին ունի իր Ծրագիրը՝ 10 Յօդուածէ բաղկացած: Միութիւնը կաղմողներն են Մեգիրէի «Կեդրոնական — Երկսեռ վարժարաններու Շրջանաւարտները»: Ծրագիրը հըրատարակած է Ագատամարտ (1909 թ. 106), ուր ոչ մէկ ծանօթութիւն հիմնուած մասին: Միութեան Գործ. Մարմին Դիւանը կը կազմեն.

Լ. Հէքիմեան
Տիգ. Սարգիսեան
Յ. Պօյաճեան

Ատենապետ
Ատենադպիր
Գանձապետ

ՀԻՒՍԷՅՆԻԿ ԳԻՒՂ.

1. ՀԱՅԿԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1865)

Կը յիշուի առաջին անգամ 1871ին, երբ կը մասնակցի Հիւսէյնիկի մէջ «Մմբատեան Ընկերութեան» վեցամեայ տօնախմբութեան եւ ունի իր դպրոցը (Հայրենիք, 1871 թ. 77)։ Նոյն տարին միանալով 9 Ընկերութիւններու՝ կը կազմեն «Միութիւն» անունով Ընկերութիւն մը (Հայրենիք, 1872 թ. 83)։

Հիւսէյնիկի «Հայկեան»ը հիմնուած է 1865 Մարտին: 1872 Մարտի 5ին կը տօնախմբէ իր եօթներորդ տարեգարձը՝ ներկայացնելով իզմիրի Հաչտենից Վասպուրական լճակերութեան տնդամ Միրզա Վանանդեցիի «Մեծն Ներսէս Հայաստանի Բարեբար» Ողբերգութիւնը, զոր զարոյցի տնօրէն Սարգիս Ալիսայեան համառօտած էր: Հանդէսին ներկայ են 5000 հոգի: Տեղի կ'ունենայ երգ, արտասանութիւն, ճառ, ատենաբանութիւն եւ ներկայացում: Ծիւնուած է յատուկ ծաղկաշարք կամար մը: Ընկերութեան համար հանգանակութիւն ընելով՝ կը հաւաքուի 2000 դուրուշ (Հայրենիք, 1872 թ. 97):

Ընկերութիւնը 1879ի սկիզբը վերակադ-
մուելէ վերջ (Մարտի, 1879 թ. 2263, 2283)
դպրոցը կանգուն կը պահէ երկար ատեն:
Կը Զանայ նաեւ Գիւղին մէջ աղջկանց վար-
ժարան մը բանալ (Մարտի, 1879 թ. 2334):

Գրիգոր Յ. Նաճարեան կը համարէր «Քննարկութեան նախնական անունը» «Անճնուէր»
 Ընկերութեան հաշիւներէն եղած ըլլայ եւ յետոյ փոխուած
 «Հայկեան»-ի (ՏԷՍ Պայքար, 1952 Մայիս
 12-28) : Հնութեան մէջ յիշատակութիւն մը
 գտած չենք «Անճնուէր» յորջորջումին եւ
 հաւանական չենք համարիր այդ կարծիքը :
 Ինչպէս տեսանք, արդէն 1871ին կը յիշուի
 միայն «Հայկեան» . յետոյ 1872ին դարձեալ
 «Հայկեան», առանց որեւէ յիշատակութեան
 «Անճնուէր»-ի կամ փոփոխութեան մը :

2. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1870)

2. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿՈՒՄՈՒՄ
Հիմնուած է 1870 Յունուարին՝ տեղւոյն
Բողոքականներէն, որոնք 1883 Յունուար
5ին Ընկերութեան 13րդ տարեկարձը կը
խմբեն Հանդէսով մը (Բիւրակն, Կ. Պ. 1883,
էջ 249-50) :

3. ԿԱՆԱՆՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1870—1875)

Կազմած են Հիւսէյնիկի Բողոքական
կիները՝ իրբեւ օժանդակ Ընկերութիւն «Ու-
սումնասիրացիներ» (Իւրախն, անդ)։ Զի ճըշ-
դուիր հիմնումի տարին։

4. ԱՆՁՆՈՒՅՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1879)

Հիմնուած է Թեյադրութեամբ Մկրտիչ
Փոքրթուգալեանի եւ Նախադասութեամբ Գը-
րիգոր Թերղեանի: Նպատակն է. «Հիմնել
Լուսաւորչական աղջկանց դպրոց մը Հիւ-
սէյնիկի մէջ» (Վահէ Հայկ, Ոսրբերդ եւ Թ-
նոս ոսկեղէն դաշտը. անդ՝ էջ 744-5):

1888թ. հը յիշուի իբրեւ «գլխաւոր ընկերութիւն Հիւսէյնիկի» (Արաքս, Ս. Պետերսբուրգ 1888, էջ 42) :

5. ՌԵՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԼՈՒՍԱՌՈՐԶԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ
(1882)

Հիմնած էն Ուստրի (Ամերիկա) զաղթա-
կան Հիւսէյնիկցիք՝ նպատակ ունենալով
«տարեկան 200 տոլարով աջակցել Գիւղին
Դպրոցներուն» (ՏԵ՛ս Վահէ Հայկ, Խարբերդ,
անդ՝ էջ 752) : 1895էն վերջ Ընկերութեան ա-
նունը կը փոխուի «Կրթասիրաց»ի եւ կ'ունե-
նայ մասնաճիւղեր (ՏԵ՛ս նաեւ Մանուկ Գ.
Ճիլզէճեան, Խարբերդ եւ իր զաւակները :
Յիշգրտ. 1955, էջ 276, ուր Ընկերութեան ա-
նունը սկիզբէն ի վեր ծանօթ է «Կրթասիրաց»
տիպոգրաֆ) :

1919-ին Ընկերութեան անունը կը վերածուի «Վերաշինաց»-ի, որ կը նպաստէ հայ ղաղթականներու. 1929-ին կը գործակցի Համախորհրդակցական Միութեան 3400 գործադրով՝ շինելու համար Նոր — Խարբերգը (Վահէ Հայկ, անդ) :

6.ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1888)

Կազմած են Հիւսէյնիկցի քանի մը զը-
րամատէրներ «Հագար ոսկի զրամագլխով
յատկապէս ֆարբերդցի հայեր Ամերիկա զըր-
կելու նպատակաւ...» (Արեւիք, Կ. Պ. 1888
թ. 1421)։ Ընկերութիւնը ունի իր զործա-
կատարները Ամերիկայի մէջ (անդ)։

7. ԳՐԱՍԵՐ ՄԱՆԿԱՆՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1893—1894)

Կը կազմուի զպրոցի Տնօրէն Համբար-
ձում Երամեանի առաջնորդութեամբ եւ

նորահաս պատանիներու մասնակցութեամբ: Նպատակն է. «պահել Գրադարան մը... հոգալ կարօտ աշակերտներու թոշակները եւ դպրոցական պէտքերը» (Վահէ Հայկ, անդ, էջ 745):

Յետոյ կոչուած է «Գրաւէր Խնամա-կալութիւն» եւ 1905ին կը վճարէ 45 մանչ եւ 20 աղջիկ աշակերտներու դպրոցական թոշակն ու գրեհականները (Մանգուլի էփ-փաթ, Կ. Պ. 1905 թ. 1208):

Անշուշտ սխալագրութիւն է ձեռագրեա-նի քով (անդ՝ էջ 72) Ընկերութեան անունը գրուած «Գրաւէր» Ընկերութիւն եւ «Գրա-սէր» Խնամակալութիւն:

ՄՕՐԵՆԻԿ ԳԻՒՂ

1. ԼՈՒՍԱՌՈՐԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1865—1866)
Կը յիշուի 1871ին (Հայրենիք, 1872 թ. 83), բայց հնազոյն է, ինչպէս իրեն հետ յիշուած (անդ) միւս 9 Ընկերութիւնները:

2. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1888)
Հիմնուած է Ամերիկայի մէջ: Նպատակն եղած է օգնել Գիւղի կրթական գործին (Տէ'ս այս մասին ձեռագրեալ, Խարբեր, անդ, էջ 288—9): Ընկերութեան հիմնումը 1890ին դրած է Մուշեղ Եպիսկոպոս (Ամերիկահայ Տարեցոյցը, Պոստոն 1912, էջ 177):

ՀԱՊՈՒՍԻ ԳԻՒՂ

1. ՍՄԲԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1865—1866)
Խարբեր, քաղաքի մէջ 1865ին հիմնուած «Մարտեան Ընկերութիւն» օրինակ առնելով՝ Հապուսի Գիւղի հայերն ալ նոյնա-նուն Ընկերութիւն մը կը հիմնեն, որ 1871ին կը յիշուի (Տէ'ս Հայրենիք, 1872 թ. 83), բայց չենք կրցած ճշգրիտ հիմնումի տարին:

2. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1879?)
Հիմնումը կրնայ 1879ին ըլլալ, երբ Խարբերի Գիւղերը իրարու հետ կը մրցին նոր Ընկերութիւններ կազմելու եւ դպրոց-ներ բանալու (Մասիս, 1879 թ. 2283): Ասի-կա հիմնողներն են Գիւղի Լուսաւորչական հայերը:

3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1879—1890)
Հիմնած են Հապուսի Բողոքականները (Տէ'ս Վահէ Հայկ, անդ, էջ 941):

4. ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1890—1900)
Ասիկա միացումն է «Երեք Նոյնանպա-տակ Միութիւններու, որոնք տարբեր շրջան-ներու մէջ կազմակերպուած էին երեք «տար-բեր անուններու տակ» (Վահէ Հայկ, անդ, էջ 941): Ներկայիս ունի 7 Մասնաճիւղ:

5. ՎԵՐԱՇԵՆԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1917)
Կազմուած է Ամերիկա 1917 Մարտ 14ին (Անդ):

ՀՈՂԵ ԳԻՒՂ

1. ՍՄԲԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1865—1866)
Կը յիշուի 1871ին ուրիշ 9 Ընկերութիւն-ներու հետ, որոնց հնութիւնը կը բարձրանայ մինչեւ 1865—6 (Հայրենիք, 1872 թ. 83): Ուրիշ ծանոթութիւն չունինք:

2. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1891)
Ամերիկայի մէջ 1891 Դեկտեմբեր 25ին հիմնած են Հողեցիք: Հիմնադիրներն են Պո-ղոս Սիմոնեան, Գէորգ Թերզեան, Յակոբ Մաթոյեան, Պետրոս Արսլանեան, Կարապետ Տէրաթեան: Իրենց նպատակն է. «Հաստա-տել տղայոց եւ աղջկանց վարժարաններ» (Վահէ Հայկ, անդ, էջ 877): 1921ին կը կոչուի «Հողի Միացեալ Ընկերութիւն» եւ կը հասնի ամէն կողմ ցրուած հայրենակիցներու օգնութեան: Այս նպատակներու գումարը կ'ըլ-լայ 15,000 դոլար (Անդ):

3. ԿՐԹԱՍԻՐԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1892)
Հիմնած են Բողոքական Հողեցիները Ա-մերիկայի մէջ (Մուշեղ Եպիսկոպոս, Ամերի-կահայ Տարեցոյցը, էջ 179):

4. ԵՐԻՏԱՍԱՐԳԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1924)
Կազմած են Մարտէյի մէջ ապրող Հո-ղեցիներ՝ նպատակներու համար համագործակցի կարօտեալներու (Յառաջ, Փարիզ, 1927 թ. 501):

5. ԱՂԱՏԱՆԵՆԱՄ ՄԻՈՒԹԻՒՆ (1927)
Մարտէյաբնակ Հողեցիները կազմած են (Յառաջ, Փարիզ 1927 թ. 376):

ԲԱՐՁԱՆՃ (ՓԵՐՁԵՆՃ) ԳԻՒՂ

1. ԼՈՒՍԱՌՈՐԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1865—1866)
Ծանօթ է հիմնումի ճշգրիտ տարին. կը յիշուի 1871ին (Տէ'ս Հայրենիք, 1872 թ. 83):

2. ԼՈՒՍ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1891)
Հիմնուած է Ֆէլս (Ամերիկա) 1891 Սեպտեմբեր 19ին եւ ունեցած է ձիւղեր: Իր մէկ կարեւոր գործն եղած է հրատարակու-թիւնը Մանուկ Ծերոնի գիրքը. — Բարձրան, զոր տեսնելու առիթ չենք ունեցած (Հիմն. ձեռագր. էջ 286 եւ Վահէ Հայկ, անդ՝ էջ 897):

Մերթ կը կոչուի նաեւ «Գարգաւիքաց» Ընկերութիւն:

3. ԲՈՂՈՒ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1894)
Հիմնած են ամերիկաբնակ Բողոքական Բարձրանցիներ (ձեռագր. էջ 269):

ՍՈՐՍՈՐԻ (ՍԻՒՐՍԻՐԻ) ԳԻՒՂ

1. ԲԱՐԵՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1865—1866)
Հաւանորէն 1865—6 եղած է իր հիմնու-մը, քանի որ 1871ին կը յիշուի եւ իրեն հետ յիշուած 9 Ընկերութիւններէն ոմանց հնու-թիւնը կը բարձրանայ մինչեւ 1865 (Տէ'ս Հայրենիք, 1872 թ. 83):

2. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1891)
Կազմուած է Ամերիկայի մէջ եւ բացած Գիւղին մէջ դպրոց մը (Չայն Հայրենիք, Երեւան 1899 թ. 3): Ընկերութիւնը Գիւղին մէջ 20 անգամով ճիւղ մը կ'ունենայ (անդ, թ. 6):

ԵԳՄՆԻԿ ԳԻՒՂ

1. ԼՈՒՍԱՌՈՐԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1865—1866)
Կը յիշուի 1871ին միայն (Հայրենիք, 1872 թ. 83):

2. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (...1912)
Ամերիկայի մէջ հիմնուած է ի նպատա-կով Գիւղի դպրոցին (Ազատամարտ, 1912 թ. 958: — Հիմն. Արարատ, Վաղարշապատ, 1915, էջ 932):

ԳՈՄԲ ԳԻՒՂ

1. ՍՄԲԱՏԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1865—1866)
Դժբախտաբար միայն մէկ անգամ եւ լոկ անունով յիշուած է (Տէ'ս Հայրենիք, 1872 թ. 83):

ԳԵՍԻՐԻԿ ԳԻՒՂ

1. ԹՈՐԳՈՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1865—1870)
1872ին այս Ընկերութեան անդամները կը մասնակցին Մեղիլիի «Անճուէր Ընկե-րութեան» հանդէսին (Տէ'ս Հայրենիք, 1872 թ. 123): Ծագումը հնագոյն ըլլալու է:
«Թորգոմեան» էն վերջ, մինչեւ 1888 ու-րիշ քանի մը Ընկերութիւններ կազմուած են, կ'ըսուի (Հիմն. Ծաղիկ, Կ. Պ. 1893 թ. 7), բայց իրենց անունները յիշուած չեն:

2. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1888)
Նպատակն եղած է «արդի պահանջմանց համեմատ դպրոց բանալ եւ բարձր դասա-տուններ բերել տալ» (Ծաղիկ, Կ. Պ. 1893 թ. 7): Հիմնուած է 1888 Օգոստոս 24ին Ուլ-արի մէջ: Մեծապէս օգտակար եղած է Գիւ-ղի կրթական վերելքին: Իր նպատակներով հոս կը գնեն, որոնց հասցեթով դպրոցը կը սկսէ իր գոյութիւնը (Վահէ Հայկ, անդ՝ էջ 882): — 1915էն վերջ Ընկերութեան անունը կը վերածուի «Բեպիլիկի Ընկ. Ընկերու-թեան» (Տէ'ս նաեւ ձեռագր. էջ 292):

ԽՈՅԼՈՒ—ԹԼԿԱՏԻՆ ԳԻՒՂ

1. ՀԱՅ ԲՈՂՈՒ. ԵՐԻՏ. ԴԱՍՍ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1878)
Այսինքն՝ «Խոյլուի Հայ Բողոքական Ե-րիտասարդաց Դաստիարակիչ Ընկերու-թիւն», զոր կազմած են 1878 Մայիս 30ին: Ատոր մէկ ճիւղը կը հիմնեն յետոյ Ամերի-կայի մէջ նպատակն ըլլալով. «Հաստատել Խոյլուի մէջ քրիստոնէական երկուսեւ դպրոց»

մը, ապահովեալ զբաժանուրով ու նպաստել ապագայ սերնդեան բարոյական ու մտաւոր զարգացման» (Ճիզմէճեան, անդ, էջ 298-9)։ Իր կանոնադրին համեմատ ամէն անգամ պարտաւոր է վճարել մուտքի դրամ՝ 1 դոլար եւ ամսավճար՝ 5 սենտ (Անդ)։

2. ԼՈՒՍԱՒԱՍԻՐԱՅ ԿՐԹԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1891)

Կազմուած է Պրաւիտենա 1891 Հոկտ. 18ին եւ մինչեւ 1914 զրկած է Գիւղի դպրոցին 5000 դոլար (Անդ, էջ 298)։

3. ԲՈՂՈՒՔ. ԿՐԹԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1898)

Կազմած են Լինի (Ամերիկա) մէջ։ 1912-ին կը ջանան միանալ այս երկու Ընկերութիւնները (Ագատամարտ, 1912 թ. 958)։ 1926 Սեպտեմբեր 4ին կը միանան այս երկու Ընկերութիւնները եւ կը կոչուի «Խոյն-թիւղի» վերաշինաց Միութիւն» (Ճիզմէճեան, անդ, էջ 299)։ — Տէ'ս նաեւ Հայրենիք, Բոստոն 1956 թ. 13.477)։

ԲԱՋԱՄԱՇԵՆ ԳԻՒԴ

1. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1888)

Հիմնուած է Գիւղին մէջ 1888ին (Վահէ Հայկ, անդ, էջ 839)։

2. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1892)

Կազմուած է 1892 Սեպտեմբեր 12ին Ամերիկա (Ապտալ Գոլէճ Պօղոսեան, Բազմաչէնի ընդարձակ պատմութիւնը. Պոստոն, էջ 172)։ Ընկերութիւնը շինած է աղջկանց վարժարան մը Գիւղին մէջ (Անդ, էջ 187)։

3. ՎԵՐԱՇԻՆԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1916)

Ամերիկացի Բազմաչէնիները հիմնած են օգնելու համար կարօտ վերադարձեալներուն (Ճիզմէճեան, անդ, էջ 272)։

ԴԱՏԵՄ ԳԻՒԴ

1. ՀԱՅ ԼՈՒՍ. ԵՐԻՏ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1891)

Հիմնուած է Ամերիկա 1891 Յունիս 17-ին։ Հիմնադիրներն եղած են. Մանուկ Ղազարսեան, Մկրտիչ Քէլէճեան, Կարապետ,

Յակոբ եւ Պօղոս Հերոյեան, Մարգիւս Հայթախեան, Յակոբ Իսրայէլեան, Մարտապ Հըրոյեան (Տէ'ս Հայրենիք, Պոստոն 1942 թ. 9116)։ Նպատակն եղած է. «Իպրացի միջոցով օգնել Դատեմի երկսեռ պատանիներուն եւ ժողովուրդին մտաւոր զարգացման, ինչպէս նաեւ հոգեկան արթնութիւն եւ սրտի ազնուացման ստապ կանգնիլ» (Գ. Միւթարեան, Մեր Գիւղը Դատեմ. Պոստոն 1958, էջ 59)։

Ընկերութեան շօշափելի եւ շատ կարեւոր մէկ գործը կ'ըլլայ հրատարակութիւնը Դատեմ Գիւղի Պատմութեան. — Մեր Գիւղը՝ Դատեմ 1958, խմբագրութեամբ Պ. Գուրգէն Միւթարեանի։

ԵՂԵԳԻ ԳԻՒԴ

1. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1892)

Հաստատուած է Ուտարի մէջ 1892ին՝ ստապելու համար Գիւղի մշակութային կեանքին, մանաւանդ դպրոցին։ 1915էն վերջ կոչուած է «Վերաշինաց Միութիւն եւ սիրա-յօժար տրամադրած է իր միջոցները թէ՛ նոր-նորարարի եւ թէ ներդաշնակ (Վահէ Հայկ, անդ, էջ 957)։

2. ՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ (1929)

Կազմած են Մարտէյի եղբայրները՝ առաջադրելով «զարկ տալ մեր երիտասարդներուն ինքնագարգացման, վառ պահել ազգային աւանդութիւնները, հետեւելով նախա-տակներու շաղկին» (Յառաջ, Փարիզ 1929 թ. 1024)։

ՇԵՆԹԻՂ ԳԻՒԴ

1. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1891)

Հիմնած են ամերիկացի դաղթականները Ուտար քաղաքին մէջ 1891 Յունուար 1ին՝ ունենալով իրենց կանոնագիրը։ Կը նպաստեն Գիւղի դպրոցին մինչեւ 1915, որմէ վերջ նաեւ վերադարձեալներու կարիքներուն (Ճիզմէճեան, անդ, էջ 291-2)։

ՎԱՐԴԱԹԻՂ ԳԻՒԴ

1. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1892)

Կազմած են ամերիկացի դաղթականները՝ օժանդակ հանդիսանալով Գիւղի կրթ-

թական գործին։ 1905ին կը վերակազմուի (Վահէ Հայկ, անդ, էջ 974-5)։

ՔԵՐԵԼԻ ԳԻՒԴ

1. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1893)

Լուկի (Ամերիկա) մէջ հիմնուած է. 1904ին վերակազմուած եւ 1908էն վերջ բացած է աղջկանց դպրոց մը Գիւղին մէջ (Վահէ Հայկ, անդ, էջ 945)։

2. ՎԵՐԱՇԻՆԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1916)

Կը կազմուի Ամերիկա։ 1924էն վերջ կը միանան երկու անջատ Ընկերութիւնները (Ճիզմէճեան, անդ, էջ 274-5)։

ԽՈՒՍ ԳԻՒԴ

1. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1894)

Կազմուած է Ամերիկա դաղթած Խոխե-յրներէ՝ ամէն կարելի օգնութիւն հասցնելով հայրենի Գիւղին (Վահէ Հայկ, անդ էջ 230)։

ԿԱՐՄԻՐ ԳԻՒԴ

1. ԼՈՒՍ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1891-1895)

Հիմնուած է Ամերիկա. 1916ին 885 ուսը-րէ կը զրկէ հայ դաղթականներուն համար (Արարատ, Վաղարշապատ 1919 էջ 11)։

2. ԲՈՂՈՒՔ. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1891-1895)

Հիմնուածի տարիները չենք կրցած ճշդել ստոր եւ նախորդինը։ 1916ին 237 ուսը-րէ կը զրկէ հայ դաղթականներու ի նպաստ (Արարատ, անդ, էջ 175)։

ԾԱՏՈՒԿ ԳԻՒԴ

1. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1891-1895)

Հիմնած են Ամերիկայի մէջ եւ 1917ին 416 ուսը-րէ զրկած հայ դաղթականներուն (Արարատ, 1917, էջ 424)։

ԻՋՄԷ ԳԻՒԴ

1. ԿՐԹԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1891-1895)

Հիմնուած է Պրաւիտենի (Ամերիկա) մէջ (Ճիզմէճեան, անդ, էջ 279)։

2. ԼՈՒՍ. ԵՐ ԲՈՂՈՒՔ. ՄԻՍՏԵԱՆՆԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (ԻԲՐ 1903)

Կազմած են ամերիկացի իջմէյները եւ ունեցած են իրենց կանոնագիրը (Տէ'ս Ճիզմէճեան, անդ, էջ 279)։

ԾՈՒՎՔ ԳԻՒԴ

1. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1898)

Հիմնած են 20 Ծովեցիներ Ամերիկայի մէջ, որոնց շնորհիւ զրկուի կը շինուի Գիւղի դպրոցը (Ճիզմէճեան, անդ, էջ 290)։

2. «ԾՈՒՎՔ» ԵՐԻՏԱՍԱՐԳԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1925)

Հիմնած են Մարտէյի մէջ 1925 Մայիս 10ին՝ ջանալով «ամփոփել դժբախտացած եւ վշտահար հայրենակիցները եւ... օգնել ա-նոնց» (Յառաջ, 1927 թ. 338)։

ԲԱՇԱՂԱԿ ԳԻՒԴ

1. ԿՐԹԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1893)

Հիմնուած է Նիւ Եորկի մէջ 1893 Նոյ. 2ին։ Նախաձեռնողներն են Ա. Թֆէնկէճեան, Ա. Պօյաճեան, Կ. Արապեան (Ճիզմէճեան, անդ, էջ 278)։

2. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1893)

Միւսերոյ Գիւղի դաղթականներէն կը հիմնուի եւ կը տեւէ մինչեւ 1924 (Ամերի-կահայ Տարեցոյց, անդ, էջ 180)։

3. ԲԱՇԱՂԱԿԻ ՀԱՅՈՑ ԿՐԹԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1904)

Նախորդ երկուքին միացումն է (Ամերի-կահայ Տարեցոյց, անդ, էջ 180)։

ՇԵՑԻ ՀԱՅԻ ԳԻՒԴ

1. ԵՐԻՏԱՍԱՐԳԱՅ ՄԻՈՒԹԻՒՆ (1926)

Կազմած են Մարտէյի պանդուխտները՝ շատ օգտակար ըլլալով իրենց վերադարձ եղբարց (Վահէ Հայկ, անդ, էջ 966)։

ԱՂՆՑԻՔ ԳԻՒԴ

1. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1896)

Հիմնած են Ամերիկայի մէջ՝ իրենց Գիւ-ղի կրթական մակարդակը բարձրացնելու համար։ Ընկերութիւնը «Դպրոցատիրաց Ըն-

«Լեւոնթեան» Բէսնի (Ֆրանսա) վարժարանին կը յատկացնէ 300 դոլար (Ճիզմէճեան, անդ, էջ 280) :

ՄՈՒՌԻ ԳԻՒՂ

1. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ (1909)

